# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***2019թ. սեպտեմբերի 11-ից 14-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ***

1. **Անուն, ազգանունը՝**

Կարեն Բրուտյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2019թ. սեպտեմբերի 11-ից 14-ը

4. **Հրավիրող կողմը՝**

ՌԴ ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն 2019 թ. Մոսկվայի Ֆինանսական Ֆորումին

6. **Քննարկված թեմաները՝**

2019 թ. Մոսկվայի Ֆինանսական Ֆորումը (այսուհետ նաև՝ Ֆորում) ռուսաստանյան ամենահեղինակավոր հարթակներից մեկն է՝ հանրային ֆինանսների կառավարման քաղաքականությանը առնչվող հարցերի քննարկման տեսանկյունից: Այն կազմակերպվում էր երրորդ անգամ, ՌԴ կառավարության՝ ի դեմս ֆինանսների նախարարության և ք. Մոսկվայի կառավարության հովանու ներքո:

Ֆորումի շրջանակներում բազմաբնույթ ձևաչափերով կազմակերպվող միջոցառումները համախմբում են ՌԴ և հարևան երկրների օրենսդիր և գործադիր իշխանությունների, ինչպես նաև գործարար օղակների և ակադեմիական հանրության ներկայացուցիչներին՝ ֆինանսական և տնտեսական ոլորտների մի շարք արդիական հարցերի շուրջ:

Մասնավորապես, 2019թ. Ֆորումի շրջանակներում քննարկվել են հարկաբյուջետային կանոնների արդյունավետությունը և դրանց զարգացման հնարավորությունները ԵԱՏՄ անդամ երկրներում:

Վերջին տարիներին հարկաբյուջետային քաղաքականության կայունության ապահովումը ԵԱՏՄ անդամ պետությունների ուշադրության կենտրոնում է: Այս խնդրի լուծմանն ուղղված հիմնական գործիքներից մեկը հարկաբյուջետային կանոններն են: Ինտեգրման զարգացումը և եվրասիական տարածքում տնտեսությունների փոխկապակցվածության աճն ապահովելու տեսանկյունից կարևոր է ԵԱՏՄ անդամ երկրների կողմից բյուջետային կանոնների կիրառման փորձի փոխանակումը հանրային ֆինանսների կառավարման քաղաքականության մշակման համատեքստում: Ավելին, յուրաքանչյուր պետության հարկաբյուջետային կանոններից զատ՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով սահմանված են անդամ պետությունների պետական պարտքի և դեֆիցիտի միասնական սահմանային արժեքներ, որոնք կարող են դիտարկվել որպես ընդհանուր բյուջետային կանոններ անդամ երկրների համար:

Ֆորումի ընթացքում քննարկվել են հարկաբյուջետային կանոնների արդի համակարգերի արդյունավետությունը, անդամ երկրների համագործակցության զարգացման ուղղությունները մակրոտնտեսական համատեղ քաղաքականություն վարելու տեսանկյունից՝ հաշվի առնելով տնտեսությունների միջև եղած տարբերությունները, հարկաբյուջետային կայունության ընդհանուր ստանդարտների սահմանումը:

## 7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2019 թ. Մոսկվայի Ֆինանսական Ֆորումի օրակարգը հագեցած էր և ընդգրկում էր մի շարք հանդիպումներ, պանելային ձևաչափով քննարկումներ և միջոցառումներ:

Մասնավորապես, ՌԴ ՖՆ բարձրաստիճան ղեկավարության հետ երկկողմ հանդիպումների ընթացքում հայկական կողմը ևս մեկ անգամ ընդգծել է ՀՀ և ՌԴ մեջ երկարաժամկետ և դաշնակցային հարաբերությունների ամրապնդման և խորացման մեծ ներուժը՝ հանրային ֆինանսների կառավարման բնագավառում, միաժամանակ բարձր

կարեվորելով «ՌԴ ՖՆ Գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտ»-ի (այսուհետ՝ ԳՀՖԻ) միջոցավ ՀՀ ՖՆ-ին նախկինում ցուցաբերվող գիտամեթոդական աջակցության և տեխնիկական օժանդակության արդյունքները՝ թե ՀՀ ՖՆ համապատասխան աշխատակիցների կարողությունների զարգացման, թե մեթոդական փաստաթղթերի և իրավական ակտերի մշակման իմաստով:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հայկական կողմը առաջարկել է ուրվագծել ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների միջև համագործակցության տրամաբանության շրջանակը՝ սահմանելով, որ համատեղ իրականացվող աշխատանքները միտված լինեն հետևյալ խնդիրների հետևողական և համակարգված ուսումնասիրությանը/հանգուցալուծմանը.

- Ծրագրային բյուջետավորման (ԾԲ) շարունանակական զարգացում. *բյուջետային ծրագրերի և դրանց ոչ ֆինանսական ցուցանիշների մշտադիտարկման և վերանայման մեթոդաբանության մշակում, ինչպես նաև ծրագրային ձևաչափով իրականացվող բյուջետային գործընթացի անխափան գործողությունը երաշխավորող ծրագրային ապահովման շարունակական արդիականացում և բարելավում,*
- Նախաձեռնողական բյուջետավորման (инициативное бюджетирование) ներդրման հնարավորությունների գնահատում՝ պետական և համայնքների բյուջեների հրապարակայնության մակարդակի բարձրացման և բյուջետային գործընթացում քաղաքացիների մասնակցության բարձրացման նպատակով *(պայնավարվածություն է ձեռքբերվել ԳՀՖԻ-ի ներկայացուցիչների առաջիկա ՀՀ այցի շրջանակներում այս հարցը դարձնել քննարկման և բազմակողմնակի ուսումնասիրությունների առարկա՝ ներգրավելով համապատասխան որոլտի փորձագետներ)*:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպումների ընթացքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ՝ կողմերի միջև արդյունավետ համագործակցության շարունակականության ապահովման, վերջինիս ուղղությունների ընդլայնման և առաջիկա տարիների համագործակցության շրջանակի վերաբերյալ հետագա աշխատանքային քննարկումները շարունակելու շուրջ:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

17.09.2019թ.